

Հացահատիկի բերքահավաքի կազմակերպումը և հետագա աշխատանքները

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքը միշտ էլ եղել է հողագործի ամենաառաջնային խնդիրներից մեկը: Առանձնակի մոտեցում է անհրաժեշտ հատկապես հացահատիկի բերքահավաքի իրականացման աշխատանքներին:

Բերքահավաքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի հատիկների կորուստը հասնի նվազագույնի, ապահովի բարձր սերմնային և ապրանքային հատկանիշներով հատիկի ստացումը: Հացահատիկի բերքահավաքը սեղմ ժամկետում կատարելը, բերքահավաքի մեքենաների ու գործիքների արդյունավետ օգտագործելը, կորուստները մինիմումի հասցնելը կնպաստեն բերքի քանակի և որակի բարձրացմանը:

Նկատի ունենալով այն, որ հացահատիկային կոմբայները երկարամյա շահագործումից հետո բավականին հնացել են, մեծացել է հնձի ժամանակ հատիկի կորստի հավանականությունը, ուստի ֆերմերները պետք է ուշադիր լինեն և մեխանիզատորների հետ միասին ժամանակին վերացնեն առաջացած թերությունները: Կորուստներ են լինում նաև հնձի ժամկետների խախտման դեպքում: Լավագույն ժամկետներից վաղ կամ ուշ կատարված բերքահավաքի դեպքում իջնում է հատիկի բերքատվությունը և ընկնում է որակը: Ըստ գոտիականության սկսվել են հացահատիկային մշակաբույսերի, հատկապես գարնանացան գարու բերքահավաքի աշխատանքները:

ՌԶԳ ՀԿ «Անասնակերի արտադրության արդյունավետ փորձի խթանում թիրախային համայնքներում» ենթաձրագրում ընդգրկված ֆերմերները մշակել են գարի կորնգանի կամ առվույտի ենթացանքով և այժմ նախապատրաստվում են գարու բերքահավաքի կազմակերպմանը:

Հայտնի է, որ գարու բերքահավաքը պետք է կատարել ճիշտ ժամանակին և սեղմ ժամկետում, որովհետև հասունացման փուլում գարու որակական հատկանիշներն ու 1000 հատիկի քաշը լինում է ավելի բարձր, ուշացնելու դեպքում կթափվեն երկշարք ձևերի հասկերից հատիկները, իսկ բազմաշար գարիները հասկի առանցքի թուլության պատճառով կոտրվում են և տեղի է ունենում բերքի կորուստ:



Հատկապես, որ մի շարք համայնքներ չունեն հացահատիկային կոմբայներ և պետք է կոմբայներ բերեն այլ համայնքներից, ուստի մեծանում է հնձի սահմանված ժամկետների խախտման հավանականությունը, որը և տեղիք կտա բերքի կորուստի:

Ուրեմն անհրաժեշտ է ճիշտ ժամանակին պայմանավորվածություն ձեռք բերել կոմբայնավարների հետ, հացահատիկի հունձը չուշացնելու համար:

Կարևորվում է նաև կորնզանի կամ առվույտի ենթացանքով մշակված գարնանացան գարու հնձի տեխնոլոգիայի պահպանումը: Այսպես, ծածկող մշակաբույսի (գարի, վարսակ, հաճար, ցորեն և այլն) հունձը պետք է կատարել 15 – 20 սմ բարձր, որպեսզի կորնզանի կամ առվույտի մատղաշ ցողունները չվնասվեն, հնձից անմիջապես հետո դաշտից հանել ծղոտը և ծղոտի կույտի տակ մնացած մղեղը, այլապես խոտաբույսերը մնալով կույտի տակ խիստ վնասվում են:

Ստացված բերքը պահեստավորումից առաջ չորացնում են խոնավությունը հասցնելով 13 -14 %- ի: Եթե հատիկը պետք է օգտագործվի որպես սերմացու, ապա այն քամհարում են, զտում ու նոր պահեստավորում: Գարին համարվում է ոչ միայն կարևոր պարենային, կերային և տեխնիկական կերաբույս, այլև հանդիսանում է արժեքավոր հումք գարեջրի արտադրության համար:

Մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ ենթածրագրում ընդգրկված ֆերմերների կողմից մշակված գարու ցանքատարածությունները, չնայած համապատասխան տեխնիկայի բացակայության և մշակության ագրոտեխնիկայի ոչ լիարժեք պահպանման պայմաններին, բավականին լավ աճել են և կարող են ապահովել միջին բերքատվություն, եթե ժամանակին կատարվեն հնձի աշխատանքներն ու կանխվեն կորուստները: